ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ, ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02-2»

«23» 04 2020 թ.

ք.Երևան

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բևեռային ուղի>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում՝ սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դարական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
ՀՀ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Մանանդյան 25շ., բն.6
Գործ. հասցեն ք.Երևան, Բագրատունյաց 27/1
ՀՎՀՀ 02228306
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/հ 1510032345990100

Տնօրեն Ամալյա Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«23» 04 2020 թ. կնքված
ԴԴ-ԳՀՇՁԲ-20/02-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	Մատուցվող ծառայության առավելագույն միավորի գին	ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումար	ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գին	Կնքվելիք պայմանագրի ընդհանուր /առավելագույն/ գինը	չափման միավորը	ընդհանուր քանակը	Մատուցման	
										հասցեն	ժամկետը**
2	50311240/1	Համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	Համաձայն կից ներկայացված ցանկ 2-ի		**259 000**	194 250	**3 500 000**	դրամ	1	ք. Երևան	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 20-ը:
3	50311250/1	Համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	Համաձայն կից ներկայացված ցանկ 3-ի		**13 000**	7410	**550 080**	դրամ	1	ք. Երևան	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 20-ը:

*Ցանկ 2-ը Ցանկ 3-ը հանդիսանում են սույն հավելվածի անբաժանելի մաս

Այլ պայմաններ՝

1. Այն մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման, պետք է փոխարինել նորով, որոնք պետք է լինեն չօգտագործված և որոնց համար պետք է տրվի առնվազն 6 ամիս երաշխիքային ժամկետ:

2. Ծառայությունները մատուցվում են Երևան քաղաքում՝ Պատվիրատուի կողմից նշված հասցեում: Այն դեպքում, երբ Պատվիրատուի նշած հասցեում հնարավոր չէ պատշաճ կերպով իրականացնել ապաստարկումը, Պատվիրատուի համաձայնությամբ վերանորոգման ենթակա սարքը կարող է տեղափոխվել Կատարողի արհեստանոց:

3. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի կողմից համապատասխան հայտ ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց մասերի փոխարինման ծառայությունների դեպքում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում, երբ փոխարինվող մասերը դեռևս պահին առկա չեն՝ Պատվիրատուի համաձայնությամբ կարող է ամիսների ծառայությունների մատուցման այլ ժամկետ:

4. Յուրաքանչյուր սարքի սպասարկման և նորոգման համար՝ Պատվիրատուի պահանջով Կատարողի կողմից կազմվում, կնքվում և Պատվիրատուին է ներկայացվում ստանդարտ գնման և գնահատման ակտ:

2. Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

**Պատվիրատուի կողմից առաջին հայտը ստանալուց հետո հայտով նախատեսված ծառայությունները մատուցվում են 20 օրացուցային օրվա ընթացքում: Մնացած բոլոր դեպքերում գործում է սույն մասի 3 կետը:*

***Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
ՀՀ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Մանանդյան 25շ., բն.6
Գործ. հասցեն ք.Երևան, Բագրատունյաց 27/1
ՀՎՀՀ 02228306
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/հ 1510032345990100

Տնօրեն Ամալյա Հակոբյան

(ստորագրություն)

Հավելված N 2
«23» 09 2020 թ. կնքված
ԴԴ-ԳՀՇՁԲ-20/02-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	50311240/1	Համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	-	1 225 000	1 225 000	1 225 000	2 100 000	2 100 000	2 100 000	3 500 000	3 500 000	3 500 000	3 500 000
3	50311250/1	Համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	-	192 528	192 528	192528	330 048	330 048	330 048	550 080	550 080	550 080	550 080

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
ՀՎՀՀ՝ 900011192151
ՀԿՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Մանանդյան 25շ., բն.6
Գործ. հասցեն ք.Երևան, Բագրատունյաց 27/1
ՀԿՀՀ 02228306
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/հ 1510032345990100

Տնօրեն Ամալյա Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » 2020 թ. կնքված
ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2020 թ. կնքված
ԴԴ-ԳՀՇՁԲ-20/02-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ցանկ 2

Հ/հ	Լազերային և թանաքային տպիչների,պատճենահանող սարքերի, սկաներների, ֆաքսերի տեխնիկական բնութագրերի և սպասարկման ծառայությունների անվանումները	դրամ
	HP LJ P2035/P2014/LJ 2015/LJ 1010/LJ 1018/LJ 1020/LJ1022/LJ1102/P1005/P1505/LJ1160/M402dne/M203dn/LJ 2420/M1536/LJ Pro 400M 426/Canon LBP2900/MF3110/MF3220/LBP6000/LBP 6020/MF4010/MF4410/Samsung M2020/M2010/KYOCERA FS1040/Kyocera ecosys M2530dn/KYORCERA ECOSYS P2135dn/KYORCERA KM1500/ KYORCERA ECOSYS P3155dn կամ համարժեք լազերային տպիչի	
1	Դիագնոստիկա սև և գունավոր, պրոֆիլակտիկա սև և գունավոր	6000
2	Վերանորոգում սև կամ գունավոր (ներառյալ պահեստամասերը՝ տպասալ, ատամնանիվ, ջերմատաքացուցիչ, մեխանիկական դետալներ, վառարան) չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	10000
3	Վառարանի թերմոժապավենի փոխարինում ներառյալ թերմոժապավենը	7500
4	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ տեֆլոնե ռետինե լիսեռ	8000
5	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ վառարանի ռետինե լիսեռ	10000
6	Վառարանի ջերմատաքացուցիչի փոխարինում ներառյալ ջերմատաքացուցիչը	9000
7	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռ կամ համարժեք	3500
	HP DJ 920/HP DJ 3745C կամ համարժեք թանաքային տպիչի	
1	Վերանորոգում, դիագնոստիկա, պրոֆիլակտիկա	5000
2	Տպող գլխիկի փոխարինում ներառյալ գլիխիկը	14000
	HP LJ M5035/M5025MFP/4345/Canon IR 2520/IR2525/iR2016j/Xerox 5021 կամ համարժեք պատճենահանող սարքի	
1	Դիագնոստիկա , պրոֆիլակտիկա սև կամ գունավոր	6000
2	Վերանորոգում սև կամ գունավոր (ներառյալ պահեստամասերը՝ տպասալ, ատամնանիվ, ջերմատաքացուցիչ, մեխանիկական դետալներ) չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	10000
3	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում ներառյալ վառարանի թերմոթաղանթը	9500
4	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ վառարանի ռետինե լիսեռ	14000
5	Թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը	6000
6	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը	4500
7	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ մագնիսական լիսեռը	12000
8	Չափիչ դանակի փոխարինում ներառյալ դանակը	5000
9	Մայրական սալիկի փոխարինում նորով ներառյալ մայրական սալիկը	21000
10	Սքաների բլոկի փոխարինում ներառյալ բլոկը A4/A3կամ համարժեք	15000
11	Կարատրոնի բլոկի, կամ կարատրոնի փոխարինում ներառյալ բլոկը կամ կարատրոնը	8000
12	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռ կամ համարժեք	4000
	HP 5590/G2710/G3110/3800/ 9200C/ Epson Perfection V19/GT2500/V350/ Canon Lide110/Lide120/Musteck Paw 2400/Bearpaw 2400Cu/ Opticbook 4800/Scaner xerox 7600 կամ համարժեք սկաների	
1	Սքաների լամպի փոխարինում ներառյալ լամպը A3	4000
2	Սքաների լամպի փոխարինում ներառյալ լամպը A4	3000
3	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	8000
4	Տպասալի փոխարինում ներառյալ տպասալը	11000
5	Ինֆորմացիոն լարի փոխարինում ներառյալ լարը	6000

6	Սքանավորող բլոկի փոխարինում ներառյալ բլոկը	16000
7	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռ կամ համարժեք	5000
	Brother inteli FAX-870mc/ Panasonic KX FL612CX/FL402 CX կամ համարժեք	
	Ֆաքսի	
1	Դիագնոստիկա, պրոֆիլակտիկա	4000
2	Վերանորոգում (ներառյալ պահեստամասերը՝ տպասալ, ատամնանիվ, ջերմատաքացուցիչ, մեխանիկական դետալներ, բարձրախոս, լսափող)	9000
3	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռ կամ համարժեք	5000
	Ընդհանուր	259 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
ՀՎՀՀ՝ 900011192151
ՀԿՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Մանանդյան 25շ., բն.6
Գործ. հասցեն ք.Երևան, Բագրատունյաց 27/1
ՀԿՀՀ 02228306
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/հ 1510032345990100

Տնօրեն Ամալյա Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Տանկ 3

Հ/հ	Լազերային և թանաքային տպիչների,պատճենահանող սարքերի տեխնիկական բնութագրերի և սպասարկման ծառայությունների անվանումները	դրամ
	HP LJ P2035/P2014/LJ 2015/LJ 1010/LJ 1018/LJ 1020/LJ 1022/LJ 1102/P1005/P1505/LJ1160 /M402dne/M203dn/ LJ 2420/M1536/LJ Pro 400M 426/Canon LBP2900/MF3110/MF3220/LBP6000/LBP 6020/MF4010/MF4410/Samsung M2020/M2010/KYOCERA FS1040/Kyocera ecosys M2530dn/KYORCERA ECOSYS P2135dn/KYORCERA KM1500/ KYORCERA ECOSYS P3155dn կամ համարժեք լազերային տպիչների	
1	Քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները և չիպը, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում նորով (թմբուկ, կարատրոն, մագնիսական լիսեր, չափիչ դանակ, քարթրիջի իրան) ապահովելոն անթերի և մուգ տպագրություն մինչև տոների վերջանալը	5000
	HP DJ 920/HP DJ 3745C կամ համարժեք թանաքային տպիչների	
1	Լիցքավորում սև ներկով համապատասխան քանակով, գունավոր ներկով համապատասխան քանակով	2000
	HP LJ M5035/M5025MFP/4345/Canon IR 2520/IR2525/iR2016j/Xerox 5021 կամ համարժեք պատճենահանող սարքերի	
1	Լիցքավորում պատճենահանման սարքի ներառյալ տոները	6000
	Ընդհանուր	13000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(անուն,ազգանուն)

L.S.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Մանանդյան 25շ., բն.6
Գործ. հասցեն ք.Երևան, Բագրատունյաց 27/1
ՀՎՀՀ 02228306
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/հ 1510032345990100

Տեօրեն Ամալյա Հակոբյան

(անուն,ազգանուն)

L.S.